

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 150

**Աստուծոյ կամքի բարի հաճութիւն** – Նախասահմանութեան վերաբերեալ Աստուծաշնչի ամենաբացայայտ եւ մանրամասն հատուածներէից մէկը Հռովմայեցիս 9ն է: 6րդ եւ 7րդ համարներում Պօղոսը բացատրում է թէ ոչ բոլոր նրանք որ ազգային Իսրայէլից են պատկանում են Աստուծոյ ճշմարիտ Իսրայէլին՝ քանի որ ոչ Աբրահամի բոլոր սերունդն են Աբրահամի ճշմարիտ որդիք ինքնաբերաբար, այլ միայն նրանք որ Աբրահամին տրուած Աստուծոյ խոստումի ժառանգներն են: Թէպէտ Իսահակն ու Իսմայէլը երկուսն էլ Աբրահամի զաւակներն էին, սակայն Աստուծոյ ընտրեց Իսահակին եւ տուց խոստումը նրա միջոցով:

Հիմա ոմանք կարելի է ասեն թէ իհարկէ Աստուծոյ ընտրեց Իսահակին, քանի որ նա Սարայի զաւակն էր, իսկ Իսմայէլը Հագարինը՝ աղախնիցը (Գաղատացիս 4:22-26): Բայց Հռովմայեցիս 9:10-13ում Պօղոսը շարունակելով գրում է Իսահակի որդկանց առթիւ ուր Աստուծոյ ասում է՝ «Յակոբին սիրեցի, եւ Եսաւին ատեցի»: Յակոբը եւ Եսաւը զոյգ էին, ուստի բնականօրէն գրեթէ հաւասար. նրանք նոյն Հրէայ հօր ու մօրիցն էին, ուստի նոյն ընտանիքից, ուրեմն պարզապէս Աստուծոյ ընտրութիւնը ոչ մի կապակցութիւն չունէր նրանց ժառանգութեան կամ ազգականութեան հետ: Բայց Պօղոսը գնում է նոյնիսկ աւելի առաջ, ասելով թէ Աստուծոյ որոշումը կատարեց նոյնիսկ նախքան նրանք ծնւած էին, ու նոյնիսկ նախքան նրանք կատարել էին որեւէ մի բան՝ բարի կամ չար: Ուրեմն Աստուծոյ որոշումը կապ չունէր որեւէ նախատեսած արարքի, որոշումի, կամ էլ հաւատքի հետ: Իրականում թէ Յակոբը եւ թէ Եսաւը մեղաւորներ էին բնութեամբ՝ ի ծնէ, եւ այս բացայայտեց իրենց կեանքերում (Ծննդոց 25:27-34, 27:1-40, Եբրայեցիս 12:16): Ուստի նրանք Աստուծոյ առջեւ չունէին որեւէ արժանիք: Իրականում երկուսն էլ բնութեամբ Աստուծոյ դժգոհութեան եւ բարկութեան առարկաներն էին (Եփեսացիս 2:1-3). բայց Աստուծոյ սահմանեց որ շնորհաբարօրէն փրկել մէկին եւ արդարութեամբ թողնել միւսին Իր դատաստանի տակ:

Յակոբի հանդէպ եղած Աստուծոյ սէրը մի յատուկ, փրկարար սէր է, ուր նրա մեղաւորութեան հանդերձ Աստուծոյ ընտրեց մտնելու Յակոբի հետ մի մտերիմ յարաբերութեան մէջ՝ որպէսզի փրկել նրան, եւ դարձնել նրան Իր ընտրութեան եւ շնորհաբար սիրոյ առարկան: Աստուծոյ ատուութեան վերաբերեալ զգուշ պիտի լինել որպէսզի չհասկանալ այդ իբրեւ Աստուծոյ կողմից եղած մի չարամիտ զգուշ կամ վրէժխնդիր կեցածք Եսաւի դէմ. ոչ էլ կարող ենք թեթեւացնել այդ որ միմիայն նշանակի աւելի քիչ սիրելը: Իսկ գլխի ենթահողը պարզապէս նշանակում է Աստուծոյ որոշումը որ չհաստատի Եսաւի հետ մի յատուկ եւ փրկարար յարաբերութիւն, այլ որ մերժի նրան, եւ թողնի նրան աստուծային դատաստանի տակ: Ուրեմն Աստուծոյ ընտրական սէրը՝ մի մեղաւորի եւ ոչ միւսի փրկելու նկատմամբ, անպայմանական է եւ անկապ է Իրենից դուրս եղած որեւէ բանին (համարներ 15-16): Հռովմայեցիս 9ը ոչ միայն հերքում է նախասահմանութեան նախագիտակ տեսանկիւնը, իսկ այդ բացարձակապէս եւ ամբողջովին ոչնչացնում է դրան:

Ուրեմն պարզ հարցումը որ գտնուում է մեր առջեւ այս է թէ՛ «Ինչո՞ւ Աստուծոյ ընտրեց որ սիրել որոշ մէկերին այսպէս, եւ նախասահմանել նրանց փրկութեան»: Հարցը աւելի լայնօրէն այս է թէ՛ «Ո՞րն է Աստուծոյ ժողովրդի նախասահմանութեան գերագոյն պատճառը կամ շարժառիթը»: Թէպէտ Աստուծոյ նախասահմանութիւնը մնում է մեզի որպէս մի խորհուրդ, Պօղոսը ներկայացնում է մի պատասխան մեր հարցումին, ասելով որ Աստուծոյ յախտենական նպատակն է Իր նախասահմանութեան հիմքը (Հռովմայեցիս 9:11, Բ. Տիմոթէոս 1:9): Հռովմայեցիս 9:21-24ում Պօղոսը բրուտի եւ հողի (կալի) նմանութիւնն է գործածում, եւ ասում է որ Աստուծոյ՝ որպէս բրուտը, ստեղծում է երկու ձեւի անօթներ հողից՝ պատական գործածութեան համար, ակնարկելով ընտրեալներին եւ նրանց փրկութիւնը, եւ անարգութեան գործածութեան համար, ակնարկելով դատապարտեալներին եւ նրանց դատապարտութիւնը: Կարելի է կէտն այն է որ երկու անօթներն էլ ստեղծուած են նոյն հողի զանգաւածիցը (մասիցը)՝ նշանակելով որ թէ ընտրեալները եւ թէ դատապարտեալները գալիս են միեւնոյն Ադամի մէջ գտնուած ընկած եւ մեղաւոր մարդկութիւնից (Հռովմայեցիս 3:10-12):

Նախասահմանութիւնը բացայայտում է Աստուծոյ տարբեր յատկանիշները: Ընտրութեան մէջ Նրա սէրը, շնորհքը, ողորմութիւնը եւ գթութիւնն են ցուցադրում: Դատապարտութեան մէջ Նրա սրբութիւնը, արդարութիւնը, ուղղարարութիւնը, զօրութիւնը եւ բարկութիւնն են ցուցադրում: Երբոր Աստուծոյ որեւէ ստորոգելին է արտայայտում, ապա գերագոյնօրէն Նրա փառքն է աւելի յայտնուում: Նրա մեղաւորների հանդէպ եղած շնորհքը երեւան է բերում Իր փառքը, իսկ Նրա մեղաւորների հանդէպ եղած արդարութիւնը նաեւ երեւան է բերում Իր փառքը (Ուէստմինստրը Հաւատոյ Հանգանակը – Գլուխ 3, Բաժիններ 5 եւ 7): Եփեսացիս 1:5-12ում Պօղոսը ասում է թէ Աստուծոյ նախասահմանութիւնը հիմնուած է Իր նպատակի վրայ՝ Իր կամքի բարի հաճութեանը, այսինքն Աստուծոյ անում է այդ ինչ որ հաճեցնում է Նրան, եւ այդ բարի է, եւ ի վերջոյ այս բոլորը Իր փառքի գովասանքի համար է (Մաղմնոս 115:3, Եսայիա 48:11, Մատթէոս 11:25-26, Հռովմայեցիս 9:11, 18): Սուրբ Գիրքը ուրիշ ոչ մի պատճառ չի տալիս: Չան Քալիկը գրում է թէ՛ «Սրանից անց (այսինքն Աստուծոյ կամքից անց) նա թոյլ չի տալիս մեզ առաջ գնալ»: Ար Սի Սփրոլը գրում է թէ՛ «Աստուծոյ փառաւորում է դժոխքի մէջ եղած ամբարիշտների դատապարտութեամբ այնքան որքան նա փառաւորում է երկնքում եղած սրբերի փրկութեամբ»: Աստուծոյ փառքը Աստուծոյ ամեն կատարած բանի միակ եւ գերագոյն շարժառիթն է՝ ներառեալ մեղաւորների ընտրութիւնը եւ դատապարտութիւնը: